NAREGATSI ART INSTITUTE

YOUR CULTURE CONNECTION

EVENTS HELD IN NAREGATSI ART INSTITUTE IN SEPTEMBER, 2026

2026թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



NAI 22nd Anniversary | "Your Culture Connection"

https://www.naregatsi.org/s/I

This year, the festive event "Your Culture Connection" was dedicated to the 80th anniversary of Daniel Yerazhisht, artistic advisor to the Naregatsi Art Institute, violinist, conductor, musicologist, and the RA Honored Artist.

At the event, the Maestro's archive photos from his student years to the present day were displayed in the NAI exhibition hall.

The evening featured the Nova Folk Instruments Ensemble (Artistic Director: Helbert Asatryan), soloists: Knar Hartounian (vocal), Nova Hartounian (shvi); Geghard Vocal Ensemble (Artistic Director: Mher Navoyan, Conductor: Anahit Papayan); Naregatsi Orchestra (Artistic Director: the RA Honored artist, tar player Artem Khachatur), soloists: Arman Araqelyan, Smbat Khalatyan, Arman Grigoryan.

Nareg Hartounian, founder of the Naregatsi Art Institute, presenting souvenirs to Daniel Yerazhisht, in his speech called the Maestro his teacher and expressed the wish that his 100th anniversary would also be celebrated at the Naregatsi Art Institute.

ՆԱՄ 22-րդ տարեդարձ | «Քո կապը մշակույթի հետ»

https://www.naregatsi.org/s/W

Այս տարի «Քո կապը մշակույթի հետ» միջոցառումը նվիրված էր ՆԱՄ գեղարվեստական խորհրդատու, ջութակահար, դիրիժոր, երաժշտագետ, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Դանիել Երաժիշտի 80-ամյակին:

Միջոցառմանը ՆԱՄ ցուցասրահում ներկայացվեցին Մաեստրոյի արխիվային լուսանկարները, իսկ միջոցառումը իրենց կատարումներով ամբողջացրեցին «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը (գեղ. ղեկավար՝ Հելբերտ Ասատրյան), մենակատարներ՝ Քնար Հարությունյանը (երգ), Նովա Հարությունյանը (շվի), «Գեղարդ» երգեցիկ խումբը (գեղ. ղեկավար՝ Միհեր Նավոյան, խմբավար՝ Անահիտ Պապայան), «Նարեկացի» նվագախումբը (գեղ. ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ, թառահար Արտեմ Խաչատուր), մեներգիչներ՝ Արման Առաքելյան, Սմբատ Խալաթյան, Արման Գրիգորյան:

«Նարեկացի» արվեստի միության հիմնադիր Նարեկ Հարությունյանը, Դանիել Երաժիշտին հուշանվերներ հանձնելով, իր եզրափակիչ խոսքում Մաեստրոյին անվանեց իր ուսուցիչը և ցանկություն հայտնեց, որ նրա 100-ամյա հոբելյանը նույնպես նշվի «Նարեկացի» արվեստի միությունում:





Memorial Evening at NAI

https://www.naregatsi.org/s/X

Memorial evening entitled “Hrant Tamrazyan: Literature: Elements, Conscience, Destiny”, dedicated to H. Tamrazyan’s 100th anniversary.

Excerpts from the books "With My Memories," "Yeghishe Charents," and "Siamanto" were read by actors of the Suren Kocharyan Poetry Theater, the RA Honored Artist Samvel Baghinyan and Ruzanna Hakhnazaryan.

Հուշ-երեկո ՆԱՄ-ում

https://www.naregatsi.org/s/Y

«Հրանտ Թամրազյան. գրականությունը՝ տարերք, խիղճ, ճակատագիր» խորագիրը կրող հուշ-երեկոն՝ նվիրված ականավոր գրականագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի ծննդյան 100-րդ տարելիցին

Սուրեն Քոչարյանի անվան պոեզիայի թատրոնի դերասաններ ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Բաղինյանը և Ռուզաննա Հախնազարյանը ընթերցեցին հատվածներ Հրանտ Թամրազյանի «Հուշերիս հետ», «Եղիշե Չարենց» և «Սիամանթո» գրքերից:



Lecture "Sasna Tsrer" Epic for Schoolchildren

https://www.naregatsi.org/s/Z

Samvel Baghinyan, founder of the Suren Kocharyan Poetry Theater, reciter, and the RA Honored Artist, presented the poem “David of Sassoun” as adapted by Hovhannes Tumanyan.

«Սասնա ծռեր» էպոսը դպրոցականների համար բանախոսություն

https://www.naregatsi.org/s/a

Հանդիպման ընթացքում Սուրեն Քոչարյանի անվան պոեզիայի թատրոնի հիմնադիր, ասմունքող, ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Բաղինյանը ներկայացրեց Հովհաննես Թումանյանի մշակած «Սասունցի Դավիթ» պոեմը՝ աշակերտներին նորովի հաղորդակից դարձնելով հայ ազգային էպոսի հերոսական աշխարհին:

EXHIBITIONS / ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ



Exhibition "My Time"

https://www.naregatsi.org/s/b

Naregatsi Art Institute unveiled the exhibition featuring works created during the youth program "My Time" implemented by the "Munetik" Youth NGO in the village of Aygedzor, Tavush.

Eighteen teenagers and young people aged 14–30 from the regions of Armenia, the Diaspora, and displaced persons from Artsakh participated in the program.

«Իմ ժամանակը» ցուցահանդես

https://www.naregatsi.org/s/c

«Նարեկացի» արվեստի միությունում բացվեց «Իմ ժամանակը» խորագրով ցուցահանդեսը, որն ամփոփում է Տավուշի մարզի Այգեձոր գյուղում իրականացված համանուն ծրագրի արդյունքները:

Մասնակցել են Հայաստանի մարզերից, Սփյուռքից և Արցախից տեղահանված 14-30 տարեկան 18 պատանիներ ու երիտասարդներ:



Ar Studio's Exhibition "Arevakel"

https://naregatsi.org/s/f

The exhibition featured the works created by the students of the "Ar" studio's junior group over the course of a year.

«ԱՐևակել» խորագրով ցուցահանդես

https://naregatsi.org/s/e

«Նարեկացի» արվեստի միությունում բացվեց «Ար» ստուդիայի կրտսեր խմբի սաների «ԱՐևակել» խորագրով ցուցահանդեսը:



Theresa Papoyan's Solo Exhibition "Inner Reflection"

https://naregatsi.org/s/g

Theresa Papoyan is a native of the village of Anushavan, Shirak region.

She started painting at the age of 8, studying with artist Yervand Bichakhchyan and studied at the Painting Department of the Gyumri Branch of the State Academy of Fine Arts of Armenia.

Թերեզա Պապոյանի «Ներքինի արտացոլանք» խորագրով անհատական ցուցահանդես

https://naregatsi.org/s/V

Թերեզա Պապոյանը ծնունդով Շիրակի մարզի Անուշավան գյուղից է:
Նկարել սկսել է 8 տարեկանից, պարապել է նկարիչ Երվանդ Բիչախչյանի մոտ:
Ավարտել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի գեղանկարչության բաժինը:

CULTURAL EXCHANGE / ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ



Meeting / Masterclass with French Sculptor Jean-Marie Fondacaro

https://naregatsi.org/s/J

Naregatsi Art Institute hosted the meeting with French sculptor Jean-Marie Fondacaro within the framework of the Cultural Exchange Program. The event evolved into a creative, meaningful, and warm dialogue between the artist and Armenian youth.

In attendance at the meeting were students from the State Academy of Fine Arts of Armenia and the P. Terlemezyan State College of Fine Arts in Yerevan, as well as students from the NAI painting group and art critics.

Հանդիպում ժան-Մարի Ֆոնդակարոյի հետ

https://naregatsi.org/s/d

Նարեկացի» արվեստի միության «Մշակութային երկխոսություն» ծրագրի շրջանակում կայացավ հանդիպում ֆրանսիացի անվանի քանդակագործ ժան-Մարի Ֆոնդակարոյի հետ: Միջոցառումը վերածվեց ստեղծագործական բովանդակալից ու ջերմ երկխոսության արվեստագետի և հայ երիտասարդների միջև:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի և Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ուսանողներ, ՆԱՄ նկարչական խմբի սաներ ու արվեստաբաններ:

UPCOMING EVENTS IN NAREGATSI ART INSTITUTE IN OCTOBER, 2026

2026Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBER • 2026
5

Ցուցահանդեսի բացում
Exhibition opening 18:30

Alina S
WoolArt

Բաց է մինչև Հոկտեմբերի 10
On view through October

ՆԱՐԵԿԱՑԻ
ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վարդանանց 16/1 Vardanants

NAREGATSI.ORG

+374 10 58 01 05

մուտքը ազատ է / admission is free

Alina Sahakyan's solo exhibition entitled "Woven Dreams"

https://naregatsi.org/s/j


Ալինա Սահակյանի «Հյուսված երազներ» խորագրով անհատական ցուցահանդես

https://naregatsi.org/s/k



Jubilee evening dedicated to the 70th birthday of renowned kamancha player Hakob Khalatyan
https://naregatsi.org/s/o

Հակոբ Խալաթյանի 70-ամյակին նվիրված հոբելյանական երեկո
https://naregatsi.org/s/n



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ախթալայի որմնանկարները. միջնադարից մինչև մեր օրեր

Լուսանկարիչ՝
ՀՐԱՅՐ ԲԱՋԷ ԽԱՉԵՐԵԱՆ

Բանախոս՝ Ախթալայի Սուրբ Աստվածածին եկեղեցու վանահայր
ՏԵՐ ՀԵԹՈՒՄ ՔԱՀԱՆԱ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻ
ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026
18:30

"The Mural Paintings of Akhtala: From the Middle Ages to the Present Day"
https://naregatsi.org/s/m

«Ախթալայի որմնանկարները. միջնադարից մինչև մեր օրեր» խորագրով միջոցառում
https://naregatsi.org/s/l

YOU CAN FOLLOW US ON FACEBOOK AND INSTAGRAM TO SEE MORE.

ԱՎԵԼԻՆ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԵՏԵՎԵԼ ՄԵԶ
ՖԵՅՍԲՈՒՔՈՒՄ ԵՎ ԻՆՍՏԱԳՐԱՄՈՒՄ.

www.naregatsi.org

Join us in making a difference

DONATE

16/1 Vardanants,Yerevan, Armenia I (010) 58 01 05

Վարդանանց 16/1